ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ. loriberd.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

« 12 » փետրվարի 2024թ. № 28-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.01 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն և 28.04.2022թ. թիվ 597-Ն որոշումների դրույթներով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21062023-06-0049 վկայականը, ՀՀ վարչապետի 13.08.2001թ. թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 18.12.2023թ. թիվ 113 դրական եզրակացությունը և ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 18.01.2024թ. թիվ 6-Ա որոշումը,

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրում գտնվող 06-009-0024-0003 կադաստրային ծածկագրով 0.01 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, կապի գործառնական նշանակության հողամասի:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Օրենքով սահմանված կարգով փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո այն ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.

2024թ. փետրվարի 12
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի փողոց, 7

հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberd.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 15 » փետրվարի 2024թ. № 29-Ա

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009 թվականի թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին հավելվածի 7–րդ և 8–րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Լոռի Բերդ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող Լոռի Բերդ գյուղում գտնվող 06-105-0635-0003 ծածկագրից առանձնացված 0.0521հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 4-րդ կարգի խոտհարքի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ

2024թ. փետրվարի 15
գ. Լոռի Բերդ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

Հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ. loriberd.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 16 » փետրվարի 2024թ. № 30-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

**ո ր ո շ ու մ  ե մ.**

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Կողես գյուղի 06-056-0101-0036 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Կողես, թիվ 2 արտադրամաս փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

**2024թ. փետրվարի 16**
**գ. Լոռի Բերդ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 16 » փետրվարի 2024թ. № 31-Ա

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի38-րդ հոդվածի1-ին մասի 7-րդ, 8-րդ կետերով, ինչպես նաև «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի անագանու 27.12.2023թ. թիվ 84-Ն որոշման 5-րդ մասի 2-րդ կետով՝

**որոշում եմ.**

1. Լոռի Բերդ համայնքի 2024թ. բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1. 01-01-01դասակարգմամբ«կառավարման ապարատ» նախահաշվի 4111 հոդվածով սահմանված 89.960.000 (ութսունինը միլիոն ինը հարյուր վաթսուն հազար) դրամը ըստ եռամսյակների սահմանել հետևյալ չափերով.

1-ին եռամսյակ – 21.490.000 (քսանմեկ միլիոն չորս հարյուր իննսուն հազար) դրամ,
2-րդ եռամսյակ – 42.200.000 (քառասուներկու միլիոն երկու հարյուր հազար) դրամ,
3-րդ եռամսյակ – 67.470.000 (վաթսունյոթ միլիոն չորս հարյուր յոթանասուն հազար) դրամ,
4-րդ եռամսյակ – 89.960.000 (ութսունինը միլիոն ինը հարյուր վաթսուն հազար) դրամ:

1.2. 01-01-01դասակարգմամբ«կառավարման ապարատ» նախահաշվի 4112 հոդվածով սահմանված 9.000.000 (ինը միլիոն) դրամը ըստ եռամսյակների սահմանել հետևյալ չափերով.
1-ին եռամսյակ – 2.500.000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ,
2-րդ եռամսյակ – 2.680.000 (երկու միլիոն վեց հարյուր ութսուն հազար) դրամ,
3-րդ եռամսյակ – 6.900.000 (վեց միլիոն ինը հարյուր հազար) դրամ,
4-րդ եռամսյակ – 9.000.000 (ինը միլիոն) դրամ:

1.3. 06-03-01դասակարգմամբ«ջրամատակարարում» նախահաշվի 4213 հոդվածով սահմանված 13.600.000 (տասներեք միլիոն վեց հարյուր հազար) դրամը ըստ եռամսյակների սահմանել հետևյալ չափերով.

1-ին եռամսյակ – 5.000.000 (հինգ միլիոն) դրամ,
2-րդ եռամսյակ – 13.600.000 (տասներեք միլիոն վեց հարյուր հազար) դրամ,
3-րդ եռամսյակ – 13.600.000 (տասներեք միլիոն վեց հարյուր հազար) դրամ,
4-րդ եռամսյակ – 13.600.000 (տասներեք միլիոն վեց հարյուր հազար) դրամ:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.

2024թ. փետրվարի 16
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ. loriberd.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 19 » փետրվարի 2024թ. № 32-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ուռուտ գյուղի 06-105-0028-0018 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Ուռուտ, 7-րդ փողոց, 5-րդ փակուղի, թիվ 3 բնակելի տուն փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.

2024թ. փետրվարի 19
գ. Լոռի Բերդ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
**հեռ. 0256-2-14-75**
էլ. փոստ: **loriberd.lori@mta.gov.am**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«19» փետրվարի 2024թ. № 33-Ա

### ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով և 9-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**ո ր ո շ ու մ  ե մ.**

1. Հաստատել Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության երկրորդ կարգի մասնագետի (ծածկագիր 3.3-9) պաշտոնների անձնագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ

**2024թ. փետրվարի 19**
**գ. Լոռի Բերդ**

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի
2024թ. փետրվարի 19-ի № 33-Ա որոշման

# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ

(ծածկագիր՝ 3.3-9)

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**1.** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) երկրորդ կարգի մասնագետի (այսուհետ՝ երկրորդ կարգի մասնագետ) պաշտոնն ընդգրկվում է համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի 3-րդ ենթախմբում:

**2.** Երկրորդ կարգի մասնագետին «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը (այսուհետ՝ քարտուղար):

## II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

**3.** Երկրորդ կարգի մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է քարտուղարին:

**4.** Երկրորդ կարգի մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:

**5.** Երկրորդ կարգի մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետներից մեկը՝ քարտուղարի հայեցողությամբ:

Օրենքով նախատեսված դեպքերում երկրորդ կարգի մասնագետին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

Երկրորդ կարգի մասնագետը աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրան՝ քարտուղարի հայեցողությամբ:

**6.** Երկրորդ կարգի մասնագետը՝

1) աշխատանքների կազմակերպման, ծրագրման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.

2) կատարում է քարտուղարի հանձնարարականները.

3) պատասխանատվություն է կրում օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

## III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**7.** Երկրորդ կարգի մասնագետը մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը:

## IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

**8.** Երկրորդ կարգի մասնագետը՝

1) աշխատակազմի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում՝ աշխատակազմի աշխատողների հետ.

2) աշխատակազմից դուրս շփվում է քարտուղարի հանձնարարությամբ.

3) աշխատակազմից դուրս որպես ներկայացուցիչ հանդես գալու լիազորություններ չունի:

## V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

**9.** Երկրորդ կարգի մասնագետը քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատակազմի առջև դրված գործառույթներից բխող խնդիրների լուծմանը և գնահատմանը:

## VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**10.** Երկրորդ կարգի մասնագետը՝

1) ունի առնվազն միջնակարգ կրթություն.

2) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», Նորմատիվ իրավական ակտերի մասին», Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

4) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

## VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**11.** Երկրորդ կարգի մասնագետը՝

1) կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.

2) ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.

3) հետևում է քարտուղարի հանձնարարականների համապատասխան ժամկետներում, կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է քարտուղարին.

4) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, ինչպես

նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

5) իրականացնում է համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի շահագործումը համայնքի տարածքում, վեհսկողություն է իրականացնում համակարգի կիրառման ուղղությամբ.

6) համակարգում է համակարգիչների աշխատանքները, ծրագրային ապահովվածությունը.

7) իրականացնում է համայնքի պաշտանական կայքի վարման աշխատանքները.

8) ապահովում է թվային տվյալների անվտանգությունը, արխիվացումը և պահպանումը.

9) իրականացնում է բնակավայրերի միջև համակարգչային ներքին ցանցի անխափան շահագործումը.

10) իրականացնում է համայնքի զբոսաշրջային ռեսուրսների (բնական, պատմամշակութային, մարդկային) գրանցամատյանի գույքագրումը և վարումը: Կիրականացվի նաև համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային և բնական ռեսուրսների մասին տեղեկատվության հաշվառման, դասակարգման և տարածման համար անհրաժեշտ աշխատանքները

11) իրականացնում է համայնքի պաշտոնական ինտերնետային կայքէջի ձևավորումը՝ ապահովելով համայնքի ղեկավարի, ավագանու որոշումների, համայնքում տեղի ունեցող միջոցառումների, իրադարձությունների տեղեկատվության թափանցիկությունը.

12) Ապահովում է համայնքային կառավարման տեղեկատվական համակարգում համապատասխան տեղեկատվության լուսաբանումը, համայնքում իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը, տեղեկատվության տրամադրման աշխատանքները.

13) քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

14) քարտուղարի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան.

15) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Երկրորդ կարգի մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

## VIII. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

**12.** Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 3-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 19 » փետրվարի 2024թ. № 34-Ա

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ ենթակետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Լոռի Բերդ համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 27-ի թիվ 58-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 27-ի թիվ 14-Ա որոշումը, ինչպես նաև հիմք ընդունելով Լոռի Բերդ համյնքի ավագանու 2023թ. փետրվարի 17-ի «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի կրթության, սպորտի և մշակույթի բնագավառում հաջողություններ գրանցած բնակիչներին դրամական մրցանակ տրամադրելու մասին» թիվ 11-Ա որոշումը՝

**որոշում եմ.**

**1.** Լոռի Բերդ համայնքի բնակչին համայնքի բյուջեից հատկացնել սոցիալական օգնություն համաձայն հավելվածի:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակչին:

**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ

2024թ. փետրվարի 19
գ. Լոռի Բերդ

Հավելված.
ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի
2024թ. փետրվարի 05-ի № 34 -Ա որոշման

# Ց ՈՒ Ց Ա Կ

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Անի Հովիկի Քոչարյան - 40000 ՀՀ դրամ, նորածին երեխա ունենալու կապակցությամբ, գյուղ Ագարակ

2. Լեռնիկ Սմբատի Մելիքջանյան - 40000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Ագարակ

3. Ավրաամ Գեորգիադիս - 40000 ՀՀ դրամ, հարազատին կորցնելու կապակցությամբ, գյուղ Յաղդան

4. Նարեկ Վահագնի Քարտաշյան – 40000 ՀՀ դրամ, եղբոր երդման արարողությանը մասնակցելու կապակցությամբ, գյուղ Սվերդլով

5. Աշխեն Հովիկի Քոչարյան – 40000 ՀՀ դրամ, որդու երդման մասնակցելու կապակցությամբ, գյուղ Լեջան

6. Հովիկ Ռուբիկի Ղազարյան - 40000 ՀՀ դրամ, Լոռվա գավաթի բաց առաջնությանը 1-ին տեղ զբաղեցնելու կապակցությամբ

7. Ռաֆիկ Ռուդիկի Ղազարյան - 40000 ՀՀ դրամ, որդու՝ Ռուդիկ Ռաֆիկի Ղազարյանի Լոռվա գավաթի բաց առաջնությանը 1-ին տեղ զբաղեցնելու կապակցությամբ

8. Սուսաննա Ալիկի Գաբրիելյան - 40000 ՀՀ դրամ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը գերազանց ավարտելու կապակցությամբ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ